

Մնաց որ, եւ քաղուած մը պիտի տամ Ներքին  
Գործոց նախարարութեան ուղղուած հաւաքական տե-  
ղեկագրէ մը՝ ստորագրուած Բ. Դրան պատուիրակ Յա-  
յիգ պէյի եւ Մոստիշեան էֆ.ի, ինչպէս նաև Մէքսիկի  
կառավարիչ էսսա Րէուֆ պէյի կողմէ:

«Ասանայի վիլայէթին ցաւայի դէպքերու բնթացքին  
«սպաննուած անձերու քիւն է, քաղաքային խօսանու-  
«քրեանց տմարներու համաձայն՝ 5683 — մէջը հառուե-  
«րով զինուորները եւ ոստիկան զինուորները — որոնց  
«1487ը իսլամ եւ 4196ը ոչ-իսլամ: Սակայն որովհետեւ  
«հաւանական է որ ըլլար առժամապէս այս տեղերը  
«հաստատուած եւ շարձանագրուած անձերու մեծ քիւ մը,  
«հաւասարապէս մեռան. եւ որովհետեւ այժմ կարելի չէ  
«այս անհասներու քիւր հետեյ, կը կարծենք որ սպան-  
«ներուցներու ընդհանուր քիւր պիտի ըլլայ, իսլամ եւ  
«ոչ-իսլամ, մօտաւորապէս 15000 հոգի: Սիեւնոյն ասեմ  
«պէտք չէ մոռնալ որ 30,000 անձեր, պատանի եւ տղայ,  
«կը մնան առանց սպասանի եւ առանց ոչ մէկ  
«նիւրական միջոցներու»:

Կը կրկնեմ, տայր Աստուած, որ այս պարտներն  
ալ խարուած ըլլային զոհերու թիւին վերաբերմամբ:  
Բայց շատ կը վախնամ որ այսպէս եղած ըլլաւ:

Երգարեւ, պէտք է երեւակայել որ Հաճընի մէջ  
իսկ, ուր ջարդ տեղի չունեցաւ, — թէև Հայերը հոն  
15 օր պաշարուած մնացին —, ցարդ ճշգրիտ լուր  
չէ առնուած 3000 Հայերու մասին՝ որոնք Աստնայի  
նահանգին մէջ կը գտնուէին: Հաճըն ըլլալով լեռնային  
և անբերրի քաղաք մը, իր բնակիչները ստիպուած են  
այլուր երթալ՝ օրապահիկ ճարելու համար:

Անհերքելի է որ ոչ-բնիկ զոհերու թիւը մեծ է.  
քայց առնուածն մէկ տարի պէտք է կարենալ հասկնա-  
լու համար ճիշտ թիւը այն անձերուն՝ որոնց ճակատա-